ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 23-ին, տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովը, որը քննարկեց Հանրապետության գիտնականների 1972 թ. կատարած աշխատանքի արդյունքները և գիտական հետազոտությունների զարգացման հետագա հեռանկարները։

Ժողովը, որի աշխատանքին մասնակցում էին Ն. Հարությունյանը, Գ. Արզումանյանը, Ռ. Խաչատրյանը, Լ. Ղարիբջանյանը և Լ. Ստեփանյանը, ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Նա ասաց, որ 1972 թ. ՀՍՍՀ ԳԱ գործունեությունն ընթացել է ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումների իրականացման նշանաբանով։ Անցած տարի գիտնականները ավելի մեծ ուշադրություն են դարձրել գիտական հետազոտությունների արդյունքները ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու հարցերին։

Հասարակական, ֆիզիկո-մաթեմատիկական, տեխնիկական, քիմիական, երկրաբանական և կենսաբանական գիտությունների բնագավառում կատարվել են բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ։ Այնուհետև Վ. Համբարձումյանն անդրադարձավ անցած տարում մեր հանրապետության գիտնականների ձեռք բերած նվաճումներին։ Նա, մասնավորապես, ընդգծեց, որ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնականները ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի տարում արգասավոր աշխատանք են կատարել։ Ստեղծվել են մի շարք աշխատություններ, որոնցում բացահայտվում են սովետական ժողովուրդների բարեկամության, համագործակցության և փոխօգնության, նրանց մշակույթների փոխազդեցության հարցերը։

Խոսելով հնգամյակի երրորդ վճռական տարում հանրապետության գիտնականների առաջ ծառացած խնդիրների մասին, Վ. Համբարձումյանն ասաց, որ անհրաժեշտ է գիտական հետազոտությունները բարձրացնել նոր մակարդակի, ավելի մեծ ուշադրություն դարձնել ժողովրդական տնտեսության զարգացման կենսական հարցերին։ Այնուհետև Վ. Համբարձումյանը հրապարակեց ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշումը ակադեմիայի առավել վաստակած անդամներին պարգևատրելու մասին։ Հայրենական գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար «Մեծարման գիր» ստացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Թախտաջյանը և Բ. Մարգարյանը։ Բազմամյա բեղմնավոր գիտական գործունեության համար «Վաստակագիր» ստացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ղարիբյանը, Ա. Նազարովը, Ռ. Բաբայանը և բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Սահակյանը։ 1971—1972 թթ. կատարած գիտահետազոտական հաջող աշխատանքի և պրակտիկայում դրա արդյունքների ներդրման համար ՀՍՍՀ ԳԱ քսանվեց աշխատակիցներ պարգևատրվեցին «Գովեստագրով»։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի 1972 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքներն ամփոփող զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ գլխավոր գիտնական-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Բակունցը։

Նա ասաց, որ 1972 թ. հանրապետության գիտությունների ակադեմիայի 32 հիմնարկներում մշակվել է 121 պրոբլեմ։ ՀՍՍՀ ԳԱ ինստիտուտները և լաբորատորիաները արդյունաբերական ձեռնարկությունների, ճյուղային գիտական հիմնարկների կազմակերպությունների և գերատեսչությունների հետ կնքված տնտեսական պայմանագրերի հիման վրա կատարել են 65 աշխատանք՝ մոտավորապես 2,5 միլիոն ռ. ընդհանուր գումարով։

Հաշվետու տարում մեծ ուշադրություն է դարձվել գիտական հետազոտությունների տեսական մակարդակը բարձրացնելու, գիտության ու պրակտիկայի կապն ամրապնդելու և ընդլայնելու, ինչպես նաև ժողովրդական տնտեսության մեջ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների արմատավորումն արագացնելու խնդիրներին։

Զեկուցողը վերլուծեց ՀՍՍՀ ԳԱ նախագահության, նրա բաժանմունքների, գիտական խորհուրդների և հանձնաժողովների գործունեությունը։ Հաշվետու տարում ՀՍՍՀ ԳԱ միջազգային և միութենական գիտական կապերն ամրապնդելու նպատակով անց են կացվել գիտաժողովներ ու այլ միջոցառումներ։ Իրացվել է 75 արտասահմանյան գործուղում, նույն նպատակով ՀՍՍՀ ԳԱ հիմնարկներն ընդունել են աշխարհի 19 երկրների 169 գիտնականներ։

Ս. Բակունցն անդրադարձավ նաև գիտական կադրերի պատրաստման հարցին, նկատելով, որ 1972 թ. ակադեմիայի աշխատակիցներից

գիսերտացիա են պաշտպանել 30 հոգի, որից 11-ը դոկտորական։

Հաշվետու զեկուցման քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Առաքելյանը, Ա. Նալբանդյանը, Ա. Ալիխանյանը, Մ. Ջայլախյանը, Ա. Ղարիբյանը և Հ. Մաղաքյանը։

Ա. Առաքելյանն առաջ քաշեց անթափոն արտադրության տեխնոլոգիայի մշակման հարցը։ Ա. Նալբանդյանն ընդգծեց գիտնականների տանկառուցման անհրաժեշտությունը։ Ա. Ալիխանյանն անդրադարձավ ֆիզիկայի ինստիտուտի աշխատանքներին։ Մ. Ջայլախյանն արծարծեց կենսաբանության զարգացման մի շարք հարցեր և առաջարկեց ստեղծել գենետիկայի ինստիտուտ։ Հ. Մաղաքյանը խոսեց գիտության մեջ կանխորոշումների խոշոր դերի մասին։

Այնուհետև «Բույսերի սիստեմավորման ներկան և ապագան» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Թախտաջյանը։ Դրանով ՀՍՍՀ ԳԱ տարեկան ժողովն ավարտեց իր աշխատանքը։

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 20-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը։

Բաժանմունքի ինստիտուտների և հիմնարկների մեկ տարվա կատարած աշխատանքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ե. Աղայանը։

Զեկուցողն ընդգծեց, որ հաշվետու տարում ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական հիմնարկները աշխատանքները ծավալել են ՍՄԿԿ XXIV համագումարի, ՀԿԿ կենտկոմի՝ «Հայկական ՍՍՀ ԳԱ համակարգում գիտահետազոտական աշխատանքների վիճակի և նրանց արդյունավետության հետագա բարձրացման մասին» հուլիսի 25-ի որոշումների ոգով և ՍՍՀՄ կազմավորման 50-ամյա պանծալի հոբելյանը արժանավայել նշելու ուղղությամբ։

Բաժանմունքի գիտական հիմնարկները 1972 թ. քննարկել են 1971—1975 թթ. հնգամյա պլանի կատարման ընթացքը, վերանայել և ճշգրտել 1973 թ. գիտահետազոտական աշխատանքների պլանը, հնարավոր չափով վերացնելով դեռևս նկատվող բազմաթեմայնությունը, ինչպես նաև հիմնարկների ուժերի և միջոցների մանրացման երևույթները։ Ե. Աղայանը նշեց, որ հաշվետու տարում ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի մեջ մտնող 9 գիտական հիմնարկները մշակել են 41 գիտական պրոբլեմներ, որոնք ընդգրկում են 263 թեմա։ Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել են 72 թեմա։

Կազմակերպվել են մի շարք գիտական նստաշրջաններ՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակին։

Այնուհետև զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Աղայանը և պատմական գիտությունների դոկտոր Խ. Բարսեղյանը։ Է. Աղայանը զեկուցեց «Մի քանի ճշտումներ հայ հին մատենագրության մեջ» թեմայով, իսկ Խ. Բարսեղյանի զեկուցումը նվիրված էր հայ պրոլետարիատի ձևավորմանը։

Դրանով ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովն ավարտեց իր աշխատանքը։

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ